

ԽՈՐԵՆԸՑՈՒՐ ՊԱՏՐՈՒԹԵԱՆ

ՈՒԽՈՒՄՆԱԽՈՐՈԽԻՒՆ

Բ.

Անդրագարձութիւն — Բնագրի թարգմանութեան ենթարկութիւն տպացուցանող նոր օրինակներ. — Թարգմանութեան հաւանական պատճառը. — Մի նոր օրինակ նպաստակաւոր թարգմանութեան. — Ըստմիջարկութեաններ Խորենացու բառագրում. Գորգի. Բանան. և Դաւիթ. — Պակասաւոր եւ խեղաթիւրուած բառեր. ոչաւ. ոչաւացն.

Առաջին յօդուածում ցոյց տուինք Խորենացու Պատմութեան «Թարգմանութեան» ենթարկութիւն, մի քանի օրինակներ բերելով ներսէս գրչի և տպագրի այլ և այլ ընթերցուածներից. Բայց որովհետեւ այդ մէջ բերուած օրինակները կարող են անբաւարար համարուիլ մի այնպիսի ծանրակըշիու երևոյթ ապացուցանելու համար, որպիսին է «Թարգմանութիւնը», ուստի և աւելորդ չենք համարում Խորից ընթերցուածների օրինակներ բերել, նոյն երևոյժն ապացուցանող.

Թարգմանութեան բազմաթիւ օրինակներ կան մինչև այժմն յայտնի եղած և բաղդատուած Խորենացու ձեռագիրներում, բայց որովհետեւ մեր նպատակը չէ այստեղ՝ բոլոր այդ թարգմանական ընթերցուածները ժողովել ուստի և բաւականանանք մի քանի օրինակներ ել բերելով միայն Կարինեանցի Բաղդատութիւնից, (այսպէս անուանեալ՝ ներսէս Լամբրոնացու օրինակից). Հետևեալ յառաջ բերուած օրինակները միմիայն առաջին գրքից են, գլուխների շարակարգութեանց համեմատ դասաւորուած։

«Ա. Ե. Հագոյն — բարձրագոյն», «պիտանաւոր — պիտանագոյն», «Ծ. Վ. Գ. Հոգեւորացն բարբառուին բանից — զոյտ հոգեւորացն մի աբանին բանից», «ի ժամանակագրաց — ի պատմագրաց», «ի վիպագրացն — ի վիպասանից», «մինչև ցայծմ — մինչև ցայսօր ժամանակի», «անշարժ իւրոյ թագաւորութեանն լինել — անշարժ իւրոյ թագաւորութեանն մնալ», «իւրօնացեալ — հպարտացեալ», «յերկիր անկանի սլաքն — յերկիր հարստի սլաքն», «բովանդակ — բաւական», «Ըստիւք հաղարովք — հինգ հազար», «երկու հազարօք — երկու հազար», «բազում — ամբաւ», «ի դիւական մրցական տոփանացն — ի դիւական ուակչոտութենէն», «մոլորախանաւլ — զուարձանալ», «ի ախեալ ի մէնջ պատահումն — է անցի մէնջ պատահումն», «սքանչելիք — գեղեցիկը», «և ոչը զնքւաստոն»

արհամարհէր — և ոչ զ ս տ ր ո ւ կ մն արհամարհէր»: «որպիսի — զի՞նչ-պիսի»: «ոչ յամե — ոչ մնաց կամ մնայ», «զարդարեալ — յօրինեալ», «արծւոյ ի մն սլացման թեռվք — արծուան ման սլացեալ թեռվք», «գանձիւք — ընչեւք»: «հիւսն . . . հեղուսելով բանս — . . . հուլով է լով բանս», «անբանութեան — ամբաստանութեան», «անբանութեան — այլաբանութեան», և այլն, և այլն:

Անշուշտ այս բոլոր օրինակները միատեսակ արժեք չունին «թարգմանութիւն» ապացուցանելու համար: «Հնդիւք հազարովք և հինգ հազար» ընթերցուածները կարող են չլինել թարգմանութիւն, գիտակցութեամբ կատարուած, այլ ակամայ: Այդ բառերը կարող են գրաւած լինել իրեն թիւ՝ տառերով և զանազան ձեռվ կարդացուած, կան և օրինակներ, որոնք կամաւոր թարգմանութիւն չեն, այլ կարող են ծագած լինել երկու բառի արտաքին նմանութիւնից, ինչպէս զոր օրինակ՝ «յարմարելով—յօրինելով», «գիտացուք—տեսցուք», «գիտել—գտանել», և այլն, և այլն, բայց իմ կարծիքով ոչ մի կասկած չէ կարելի յարուցանել այն բանի մասին, որ «վեհագոյն և բարձրագոյն» թարգմանութիւն է, այպէս և «անկանի — հարստի», «օրոխտացեալ — հպարտացեալ», «խրախճանալ — զուարճանալ», փախեաւ — էանց», «նուաստ — ստրուկ», «յամե — մընյա», և այլն և այլն:

Այսպիսով ուրեմն աներկրայելի է որ Խորենացու Պատմութեան բնագրի բազմաթիւ բառեր, նաև ոճեր ու դարձուածներ, ենթարկուել են թարգմանութեան:

Այս երեսըթի ամենահաւանական բացատրութիւնն այն է, որ Խորենացու Պատմութիւնը, ինչպէս նաև նորա անուամբ յայտնի՝ Աշխարհագրութիւնը դասագիրք են եղել: Վարժապետի տուած բացատրութիւնները նշանակուել են աշակերաներից լուսանցքում կամ բնագրի մէջ և վերջին ընթօրինակազներից ընդունուել են իրեւ սրբագրութիւն: Այսպիսով բնագրիր ենթարկուել է անհամար փոփոխութեանց և շատ անգամ այլանդակուել: Այս էլ պէտք է աւելացնել: Որ մեր միտքն այն չէ, որ բոլոր ընթերցուածների տարբերութիւնները վերագրենք թարգմանութեան: Քանի լիցի:

Ա. յօդուածում տեսանք, որ թարգմանութիւնը կարող է լինել երեմն և նպատակաւոր, ինչպէս էր օրինակ՝ Արամազդի տիտղոսներից «Կունդ — կատարը»*)

*) Մթևէթի Արամազդը Խորենացու կոչւում է «ամորուպոյին»: Անու Արտմազդը հաւանականաբար կրում էր նաև «Ողիմպետն», մակդիրը: որի պատճառք եւ, ինչպէս կարծում է մի բանտաչը: Ուզիւալ էր կոչւում Հանու քուրմերից

Այսպիսի մի նպատակաւոր թարգմանութեան համ լաւ ևս առել փոփոխութեան օրինակ կարելի է համարել Խորենացու և Հետևեալ կառըրը . «Թէ ըսդէք Հակառակ Հոգւոյն անմիաբ անեց ան այլքն ի պատմագրաց զբիւռուսեայ ասեմ» զբաղմավիպէն և զԱրիւդենայ» (Ա. 4) . Կարծում եմ որ սկզբնագրում այս հատուածը պէտք է լինէր այսպէս . «Թէ ընդէր հակառակ Հոգւոյն միաբ ան եց ան այլքն ի պատմագրաց զբիւռուսեայ ասեմ» զիազմավիպէն և զԱրիւդենայ» . Բայց որովհեաւ այդ միաբանութիւնը հակառակ Հոգւոյն Սրբոյ է ուստի և բարեպաշտ որբագրողը միաբանեցանը դարձրել է անմիաբանեցան . ինչպէս որ Կատար Արամազդը — Կունդ Արամազդ :

Խորենացու Պատմութեան բնագրի կրած փոփոխութիւնները չեն սահմանափակում անշուշտ մինչև այժմն յիշուած «Թարգմանութեամբ», աղջապտմաներով, կէտադրական օխալներով, յատուկ և հասարակ անունների շփոթմամբ, և այլն, ելն .

Ե. Եթ բնագիրն ենթարկուել է անկասկած նաև յապաւումների և յաւելուածների . Յապաւման օրինակներ շատ կան ձեռագիրներում, որոնցից մի քանիսը սպրոցի մէջ . Ա. գիրք՝ գլուխ 5, Հայկից մինչև Արայ հայ Նահապետների ցանկի մէջ պակասում է Հայկի անունը, որով Արմենակը դառնում է Բէլի հակառակորդը և նրան սպանողը, որ և յայանի հակառութիւն էր — «Նոյնպէս և զմերն ի Հայկայ մինչև յԱրայն գեղեցիկ՝ Արամեայ, Հարմեայ, Գեղամեայ, Ամասեայ, Արամագիսեայ, Արամենակայ, (Հայկայ) որ եղեւ հակառակ Բէլայ միանգամայն և կենախուզ . Այս բանում անշուշտ Խորենացին մեղաւոր չէ, հակառութիւնը ծագում է բնագրի աղաւաղութիւնից» .

Այսպիսի յապաւման օրինակ կարելի է համարել ըստ մեզ, նաև Ա. գիրք՝ գլ. 18. Հետեւալ հատուածը՝ «զի ասէ ի բանից այլոց նախ յանութեան առաջ և ըստ մատուցուի զանութեան առաջ և մատուցուի հասունաց մասն պատճեն ան որ յանձնական է զանու յա առ և յանձնաբանու առնենարդուն մին . մեհենական պատմութեանց գրողը, Մեր պատմութեան մէջ յիշուած է եւ մի այլ Արամագդ, Վասպուրականի Անձեւացեատ գաւառում, Պազտու Եկուն վերայ, «կունդ» բառը, իբրև ճաղատ, գործ է անում եւ Սիւնեաց Սպիսկոպոսը, իշմիտներ Ողբում» .

«Տեսին ի նմա զարգացուհնն»

Զանձամբ արկեալ զքուրք խաւարին,

Հերզն ճողեալ, օրովէս կը ն գին.

Ատինքն ցամաք զերդ սկզնդկին ս :

զագս ծննդեանն Շամիրամայ, և ապա ուրեմն զպատերազմն Հնդկաց։ Այս կրծատ հատուածի փոխանակ Կարինեանցի բաղդատած ձեռագիրը տալիս է աւելի լրիւ և, ըստ մեջ, աւելի հարազատ ընթերցուած։ «զի ասէ ի (բանից) բազմաց այլոց նախ յաղագս ծննդեանն Շամիրամայ, և ապա պատերազմ Շամիրամայ ընդ Զրադաշտի, և զյաղթիլն ասէ Շամիրամայ, և ապա ուրեմն զպատերազմն Հնդկաց։ Եւ ապա ուրեմն, ասացուածը բաւական ապացոյց է վերջին ընդարձակագոյն հատուածի հարազատութեանը։

Խնչպէս յապաւաման, նոյնպէս և յաւելուածի շատ օրինակներ կարելի է բերել. Ակներե է որ այժմեան տպագրի գիրք Բ. ԴԼ. 8-ի վերնագիրը՝ «Երկրորդ թագաւորութեան լինել ի զաւակէ Աշտահակայ Մարաց թագաւորին» յետոյ է աւելացրած, քանի որ այդ ութերորդ գլուխը սկզբնագրում եօթներորդի մասն էր և չեր կազմում առանձին գլուխ։ Այսպէս է նաև Ներսէս գրչի օրինակում։ Այսպէս՝ յաւելուած է մեր կարծիքով և «Սկիզբն մատենին, վերնագիրը հետևեալ հատուածում»։

«Եւ խուզեալ սորա զամենայն մատեանսն, գտանէ մատեան մի հեղեն գրով, յորոյ վերայ էր, ասէ, վերնագիրն այսպիսի. (Սկիզբն մատենին) «Այս մատեան հրամանաւ Աղեքսանդրի ի Քաղդէացւոց բարբառոյ փոխեալ ի յշնն, որ ունի զբուն հնոց և զնախնեացն բանս։ Փակագծի մէջ գրուած երկու բառը երեխ ընդօրինակողից գրուած է եղել նախապէս լուսանցքում։ Մարիքասի մատենի սկիզբը ցոյց տալու համար և յետոյ ներմուծուել է բնագրի մէջ, ինչպէս որ է այժմս տպագիրներում։ Այս երկու բառը պակասում են նաև Ներսէս գրչի օրինակում։

Յապաւումների և յաւելուածների մեր այս մէջ բերած օրինակները յայտնի էին արդէն մեծ մասամբ, թէև անուշադիր թողուած Խորենացու ընագիրն հրատարակողներից։ Այս բոլորը ցոյց են տալիս որ մեր այժմեան ունեցած բնագիրը կարող է ճշտութեան և կատարելութեան կողմից շատ թերի լինել. Խօթը ձայնաւոր գրերի յաւելուածը Գ. գիրք, 53 գլուխում, որ մինչև այսօր էլ գուրս չէ ճգուած բնագրից, յայտնի է թէ որչափ շփոթութեանց պատճառ դարձաւ։ Այդ ձայնաւորների ընդմիջարկութիւնը չկայ նաև. Ներսէս գրչի օրինակում։

«Բայց այս բոլոր ընդմիջարկութիւնները շատ աննշան են, համեմատած այն յաւելուածին, որ մենք ենթադրում ենք թէ եղած է Խորենացու երկասիրութեան մէջ, գիրք Ա. ԴԼ. 6. Մէջ բերենք ամբողջ պարբերութիւնը.

«Բայց պարտ է մեր զոմանց անգիր հին զրոյցս, որ պատմեալ եղեն վաղ ուրեմն ի մէջ իմաստնոցն յունաց, և հայն մինչ է Աշ ուսուցու-

է գործի և է բանա ուսու խոկցելոց, և է երբեր ու դու դու էն, թէպէտ և յշյժ սակաւուք՝ երկրորդել. Յորոց մի ոմն ի նոցանէ վարժեալ փիլիսոփայութեամբ, ասէր այսպէս, թէ Ով ծեղը, յորժամ էի ի մէջ յունաց վիմասութիւն վարժելով՝ դէպ եղա ի միում աւուրց՝ զի վասն աշխարհագութեամբ առաջ բան գաղաւանց ազգաց ի մէջ արանց իմաստնոց և հմտագութեանց և բաժանմանց ազգաց ի մէջ արանց իմաստնոց և հմտագութեանց բան գաղաւար. ոմանք այլազգաբար և ոմանք այլարանաբար զրոյց մատենից տային. իսկ որ կատարելագոյնն էր ի նոսա, Ովիմպիոդորոս անուն, այսպէս ասաց. Պատմեցից ձեզ ելն. ելն. »

Այս պարբերութեան գծուած տողերը մենք Խորենացունը չենք համարում. Գորդի, Բանան և Դաւիթ ոչ թէ փիլիսոփաների անուններ են, ինչպէս կարծուել է մինչև այժմն այլ եօմներորդ դարից սկսեալ և այօր Տարոնի ժողովրդական հերոսներ են:

Դուրս հանելով բնագրից այդ կասկածելի տողերը՝ պարբերութիւնը կստանայ հետևեալ ձեզ. « Պայց պարտ է մեզ զոմանց անգիր հին զրոյցու, որ պատմեալ եղեն վաղ ուրեմն ի մէջ իմաստնոցն Յունաց, թէպէտ և յշյժ սակաւուք՝ երկրորդել. Յորոց մի ոմն ի նոցանէ վարժեալ փիլիսոփայութեամբ ելն. » . Այս զրոյցները, որոնց մասին խօսում է Խորենացն, վերաբերում էին Տարոնին և Սիմ լերան. Նրագործներից մէկը, որ գուցէ Տարոնեցի էր և տեղեակ այդ երկրի անհատնում զրոյցներին, աւելացրեց լուսանցքում իւր գիտեցածը՝ « Եւ հասին մինչև ի մեզ այս զրոյցը ի Գորդի և ի Բանան անուն կրչեցեալս, ևս յերրորդ ոմն Պակթի, Դանանից յետայ եկող ընդօրինակազմներից մին մացրած կլինի այս յաւելուածը բնագրի մէջ և կարելի եղածին չափ համաձայնեցրած և կապակցած պարբերութեան ամբողջութեան հետ. Տակայն այսուամենայնիւ անկապութիւնը ակներև. է. այդ երկումէ մանաւանդ. » այս զրոյցը քաւելորդ կրկնութիւնից:

Կարող են մեզ առարկել. թէ այս տեսակ յաւելուած կարող էր լինել Խորենացու մի օրինակի մէջ միայն, մինչեւ մեզ հասած բոլոր օրինակներումն էլ այս հատուածը ամբողջութեամբ կայ բնագրի մէջ. — Բայց այս գեռ չէ ապացուցանում, որ երբ և իցե չպիտի գտնուի աւելի հարազատ օրինակ. որ ազատ լինի այս ներմուծութիւնից, այս ընդմիջարկութիւնից:

Այս էլ կայ, որ ընդօրինակողները սովորաբար « պակասաւոր » համարուած օրինակները լրացնում էին աւելի « կատարեալ », « հարուստ, օրինակներից, այնպէս որ յաւելուածները մեծ հնարականութիւն կամ հնարաւորութիւն (chance) ունեին բնագրի մէջ մտնելու. »

Ենք այս ենթադրութեան ապացոյց է ներմուծուած հատուածի անհարթ լեզուն և նորա անկապութիւնը պարբերութեան ամբողջութեան հետ.

Պարբերութիւնը առանց այս ներմուծութեան աւելի կապակցեալ՝ կոկ և ամբողջ է թուում։ Գորդի, Բանան, և Դաւիթ փիլիսոփաներ չեն գտնուել մինչեւ ցայսօր՝ չնայելով մանրամասն խուզարկութեանց և զանազան ենթադրութեանց։ Գորդին համեմատուել է մի ոմն «Գորդիաս Աթենացու հետ, որ մի անգամ է միայն յիշում իրեւ ապրած ք. Ծ. կՌ) տարի առաջ» (Խոտալ. Թարգ. և Collection T. I. p. 388. n. 3):

Տարօնի պատմական դիւցազնական վէպը ամենաընդարձակն է երեսում մեր հայրենիքի վիպասանութեանց մէջ։ Բիւզանդի պատմութիւնը պարունակում է իւր մէջ այդ վիպագրութեան մի մեծ մասը։ Յովհան Մամիկոնենի և Զենորի պատմութիւնները նմանապէս լրացուցիչ մասն են Տարօնի և շրջակայ երկիրների ժողովրդական դիւցազներգութեան։ Սըրուանձտեանի և Արեղեանի նոր ժամանակներս գրի առած «Սասունցի Դաւիթը» և «Դաւիթ և Մշերը» այդ պատմական վէպի շարունակութիւնն են։ Բայց Խորենացին պահպանել է աւելի հին յիշատակութիւն այդ վիպական պատմութեան, առնելով հայկական և թերեւ յունական (Ոլիմպիոդոր փիլիսոփայ) անդիր զրոյցներից։

Գորդիի, Բանանի և Դաւիթի անունները աւելացնող գրիչը կամեցել է բացատրել Խորենացու ակնարկութիւնները։ այս երեք անունն էլ մեզ մնչասկանալի կը մնային, եթէ չունենայինք Սրուանձտեանի և Արեղեանի ժողովածուները։ Գորդին ժողովրդական դիւցազներգութեան Ցռան Վերգոյ կամ Ցան Աէգին է, Բանանը—Եւնով Օհանն է կամ Ցռանը, իսկ Դաւիթը — Թուան կամ Թլոր Դաւիթն է։ Թէև ժողովրդական վէպն իւր ամբողջութեամբ մեզ յայտնի չէ դեռ ևս, բայց յայտնի եղած մասումն էլ արդէն գտնում ենք համեմատութեան բաւարար նիւթ։ Ուշագրութեան արժանի է և այն, որ ժողովրդական վէպի միջում, Գորդին, Բանանը և Դաւիթը ճիշտ նոյն կարգովն են յիշում, ինչպէս և Խորենացու յաւելուածի — ընդմիջարկութեան մէջ։ Դաւիթն ամենից փոքրն է, Վերգոն ընտանեաց տէր է, Ցովհանը կամ Ցռանը անդաւակ։ այս վերջին երկուսը Դաւիթի հօրեղբայրներն են։ Ընտանեաց մէջ աւագն է Վերգոն կամ Գորդին, իսկ կրտսերը — Դաւիթը։

Ուշագրութեամբ քննելով՝ այս ժողովրդական դիւցազների հետքը կարելի է գտնել թերեւ և մեր հին մատենագրութեան մէջ։ Գորդ կամ Գորդի անունը յիշում է Յովհան Մամիկոնենի պատմութեան մէջ։ Գորդ Հատախիս, «Խշան Արջուց կողմանն, որ կոչեաց զանուն գաւառին իւրում Հատախ, վասն աւելի անուան իւրում» (եր. 54.)։ Բանանը կարող է լինել Յովհան Խորենացին, որ բաղմաթիւ քաջագործութիւններից յետոյ նահատակուեց Քուղայից Թ. դարի կիսում։

«Թարգմանութեան և ընդմիջարկութեան խնդիրներից թէեւ պահաս նշանաւոր՝ բայց այսուամենայնիւ շատ հետաքրքրական են Խորենացու «պահասաւոր» կամ «կիսատ» բառերը. թէեւ սրանց թիւը շատ մեծ չէ լինելու. Այսպիսի բառերի օրինակներ յայտնի են եղել մինչև ցայտմա մրայն մի քանի հատ, որոնցից յիշենք մի քանի նշանաւորները. Անուշաւանի պատմութեան մէջ կայ հետեւալ հատուածել. «Աս անուանիւր, քանզի ձօնեալ էր ըստ պաշտամանց ի սոսին Արամանեկայ», որ յԱրմաւրի. զորոց զսաղարթուցն սօսակիւն, ըստ հանդարտ և կամ սաստիկ շնչելոյ օդոյն և եթուստ շարժումն, սովորեցան ի հմայս աշխարհիս Հայկազանց. և զայս բաղում ժամանակա» (Ա. 20).

Այս հատուածի «եեթուստ» —ը Վենետիկի 1881-ի հրատարակութիւնը գեղեցիկ կերպով սրբագրում է՝ «եեթ ոստոց շարժումն», որ հարկաւ հիմնուած պէտք է լինի որևէ և աւելի հարազատ ընթերցուածի վրայ, և. Ալիշան (Այրարատ, եր. 151. ծ. 3.) առաջարկում է «եեթուստ» կարգալ — «և թաւ ոստոց. *). Այսպէս կամ այնպէս ոստոց, բարից մնացել է բազմաթիւ ձեռագիրներում միայն առաջին վանկը՝ ուստ կամ ոստ. Մի այլ օրինակ. «Քանզի Լազիկա, Պոնդոս, Փոխգիա, Մաժաք և այլք, ոչ գիտելով զհամ պատերազմին Արշակայ, առ Մակեդոնացւոց պետութիւնն զմիաբանութիւն դաշանցն հաստատուն պահէին» (Բ. 4). Զհամ պահասաւոր բառը և. Խ. Ստեփանէ, (ծանօթ. 200.) ըստ Կարինեանցի օրինակին, յաջողապէս ուղղում է՝ — զհամբաւ. Այս գէպքումն էլ զհամբաւ բառից պահպանուել էր միմիայն առաջին վանկը՝ զհամբ.

Ուրիշ օրինակ. «Գեղեցիկ զայս քեզ հարեալ ի փառս և անջան հեշտութիւն», (Ա. 3.): «Հարեալ ի փառս» անսովոր և խորթ ոճը Լամբրոնացու օրինակն ուղղում է շատ յաջող կերպով՝ «Համարեալ ի փառս և անջան հեշտութիւն». Այս ուղղագրութիւնը արդէն մտել է Վենետիկի 1881-ի հրատարակութեան մէջ. Այս գէպքում «համարեալի», միշին ամ վանկն է դուրս ընկել Եւ գեռ կարելի է այսպիսի մի քանի օրինակներ էլ շարել բայց անցնինք մեր ասելիքին:

Այս բոլոր օրինակները ցցոց են տալիս որ «պահասաւոր» և խեղաթիւրուած բառերը այնչափ էլ սակաւաթիւ և հազուագիւտ չեն մեր այժ-

*). Հ. Աւելամի այս վարկածը յիշեցնում է մեզ Ագաթանգեղոսի հետեւալ հատուածը. «Իբրեւ եկն եմուտ ի խորան անդը եւ յընթերիս բազմեցաւ. եւ ըբրեւ մնդ գինիս մտին, հրաման ետ թագաւորն Գրիգորի՝ զի պատկս եւ թաւ ու տառոց նուէրո տարցի բագնին Անահատկան պատկերին».

մեան ունեցած բնագրում։ Երկու այսպիսի խեղաթիւրուած բառերի վրայ կամենում եմ՝ հրաւիրել ընթերցողի լուրջ ուշադրութիւնը։ Ահա օրինակները։ 1. «Հակառակ Հոգուոյն խորհել միաբանեցան (անմիաբանեցան) այլքն ի պատմագրաց՝ զի՞ւռուսեայ*» ասեմ, զԲաղմավիպէն և զԱրիւդենայ. կամ զնոյն ինքն զնաւակառուցէն և զայլոց նահապետացն. ոչ միայն վասն անուանց և ժամանակաց, այլ (և) վասն ոչ սկիզբն զառ ի մէնջ հաւացն կարգելոյ ազգի մարդկան, (Ա. 4). — 2. «Բայց ես այժմ ուրախացայց հաւ առնելով առաջիկայից իմոց բանից ի սիրելոյն իմմէ և քան զշատս յարդարախօսուէ, ի Բիւռոսեանն Սիրիղղեայ», (Ա. 6.). Հիմնուած գլխաւորապէս Խորենացու այս երկու վկայութեան վրայ Կոր Հայկազեան բառդիրքը ընդունել է իւր բառերի շարքում այս հաւ բառը՝ իրրե «ծագ հնութեան, սկիզբն, նշանակող և անտեղի կերպով նոյնացրել է «Հաւակ» շատ քիչ գործածական բառի հետ, որ նշանակում է՝ պատճառ, սկզբնապատճառ։ Յայտնի է որ հաւ նշանակում է նահանչայր, պապ, բայց ոչ երրէք սկիզբն։ Մանաւանդ որ առաջին օրինակում սկիզբն բառն էլ գտնուում է հաւացն-ի հետ միասին։ «ոչ սկիզբն զառ ի մէնջ հաւացն կարգելոյ ազգի մարդկան»։ Մեր կարծիքն այս է. հասող պէտք է իսրու՛ համբաւուցն և համարուցն մնչպէս որ համարեալը ինչպէս տեսանք վերևում, մի վանկի յապաւամբ դարձել է հարեալ, այսպէս էլ համբաւը ամբ վանկի գուրս ընկնելովը դարձել է՝ հաւ և համբաւացն — հաւացն։ Երկու գեպքումն էլ խօսքը Բիւռոսի տեղեկութեանց, կամ Խորենացու բառով ասելով համբաւների մասին է։ «Բայց ես այժմ ուրախացայց, ասում է Խորենացին, համբաւ առելով առաջիկայից իմոց բանից ի սիրելոյն իմմէ և քան զշատս յարդարախօսուէ, ի Բիւռոսեանն Սիրիղղեայ», Մնումէ մեզ ցցյց տալ որ Խորենացին սովորութիւն ունէր ուրիշ մատենագիրներից ոչ անմիջապէս քաղած տեղեկութիւնները կոչչել համբաւը և հայդ բանին վկայութիւն։ «Ոչ կամաւոր մխալանօք ի սմա յարմաքեալ բան, այլ որ ինչ ի յիշատակաց գիււանագիր մատենիցն Յունաց իսկ ըստ նմանեացն ապա և որ ինչ ի համբաւուց (կամ՝ ի համբաւաց) արանց իմաստնոց և չնախօս սիրաբանից պտուգապէս տեղեկացեալ արդարաբր քեզ զրուցեցաք» (Բ. 75.)։ Առաջին օրինակի միտքն էլ այն է, որ Բիւռոսի տուած համբաւները (տեղեկութիւնները) նաւակառուցին (նոյնի) և միւս նահապետների մասին, անունների և ժամանակների վերաբե-

* Այս «զԲիւռոսեալ» բառի փոխանակ տպագիր Խորենացիներն ունին թե ու ու ընթերցուած։ «զ Բիւռոսեալ» ասեմ. զԲաղմավիպէն եւ զԱրիւդենայ».

րութեամբ, այլ և մարդկային ազգի սկզբնաւորութեան մասին, համաձայն չեն Սուրբ Գրքին. Մեր այս ենթագրութիւնը կարող է ծառայել իրբունոր ապացոյց Խորենացու Ճշգրտութեանը և Ճշմարտասիրութեանը: Նա չէ թագդնում իւր աղբիւրները՝ ինչպէս կարծեցին քըննադատներից շատերը: Նա յիշում է յականէ-յանուանէ իւր աղբիւրը, եթէ որ այդ աղբիւրից անձամբ և անմիջապէս է օգտուել (օր. Եւսեբիոսին, Բ. 10.): Զէ մոռանում յիշեցնել ընթերցողին, որ գրքերի պակասութեան պատճառով շատ անդամ ստիպուած է յիշողութեամբ և մը գրել. «Եյլ որչափ ջան և յիշողութիւնք բաւկցեն, պատմեցաք ստուգապէս ի մեծէն Աղեքսանդրէ մինչև ի վախճան սրբոյն Տրդատայ, յոյժ կանուխ և հեռի ժամանակօք» (Դ. 1.): Ուրախութեամբ յիշում է, եթէ իւր պատմածն ապացուցանող որ և է, թէ կուզ աննշան, հիմունք կամ հեռաւոր ակնարկութիւն է գտնում որ և է հեղինակի մօտ (Ա. 21). Աերջապէս իւր ոչ անընդմիջապէս հաւաքած տեղեկութիւնները անուանում է համբաւ, ակնարկելով դրանով որ այդ տեղեկութիւնները ոչ թէ բուն աղբիւրիցն է քաղել այլ ուրիշի միջնորդութեամբ: Եւսեբի գրքից:

Եյս երկու օրինակների համբաւ բառի նեղաթիւրումը շատ հինգեւոք է լինի: Դեռ ոչ մի ձեռագրում չէ հանդիպել ուղիղ ընթերցուած: Կարինեանցի բաղդատած օրինակում հաւացն-ի փոխանակ գրուած է հաւատար մացեալ որ և ընդունել է Հ. Խորէնը իրբու ուղղագյուն ընթերցուած (աեւս աշխ. Խորէն. ծանօթ. 18): Մինչդեռ պարզ է որ հաւատար մացեալը թարգմանութիւն կամ մեկնութիւն է հաւացն մթին և անհասկանալի ընթերցուածի: «Հաւատար մացեալ» մեկնութիւնը գրողը առել է այդ՝ նոյն գլխի հետևեալ ասացուածից. «Հաւատար մացեալ» և մը (Ա. 4.): Նոյն ձեռագիրը «Հաւատար մացեալ» անհասկանալի պատճեածի փոխանակ ունի «Հաւանելով» ընթերցուածը, որ նոյնպէս թարգմանութիւն է և անհարազատ, որ սակայն ցոյց է ալիս որ «Հաւատար մացեալ» անհասպէս անհասկանալի էին և Լամբրոնացու ժամանակ, այլ և կարօտ քիչ թէ շատ յաջող մեկնութեան:

ՄԻԱԲԱՆ.